երեսուն հազար միայն, և յայսոսիկ աւուրս լուաք, թէ պրուշն նոյն երեսուն հազարաւ յուսա-հատաբար յարձակեալ ի վերայ բանակի միոյ թագուհւոյն յաղթեալ է նմա։ (Մելգոնեան առ Հ. Իգն., 1757 դեկտ. 21. [Ս. Ղազար])։

ՃՃԵ.

Թագաւորն տաճկաց[1] ի բազմաց հետէ հիւանդ էր ախտիւ քանքռենայի և խուրսախ վէրէմիյի և յանզգոյշ կալն վտանկեցաւ և հոկտ. 29 ի 5 ժամու գիշերոյն մեռաւ, և ի տեղի նորա նոյնհետայն նստուցին զորդին սուլթան ահմէտին զանուանեալն սուլթան մուստաֆայ...։ Ի մահուանն առաջ-նոյն... ոչինչ չփոթութիւն ծագեցաւ։ Բայց զարմանք մեծ այս են, զի յառաջագոյն միւնէճիմքն գուշակեցին, թէ սուլթան օսմանն ոչ կատարեալ զամս երիս, մեռանելոց է։ Եւ զկնի նորա գալոց է թագաւոր որ զաւուրս 75 կամ ըստ ոմանց 90 նստեալ յաթոռ մեռանելոց է։ Եւ զկնի յառնելոց է շփոթութիւն մեծ ի մէջ տաճկաց և հուսկ յետոյ յաղթեալ թագաւորեանքն նստուցանելոց են երրորդ թագաւոր, և նա թագաւորելոց է ամս 25 և ապա վերջանալոց է թագաւորութիւն ի տաճկի։ Արդ առաջինն կատարեցաւ և երկրորդն երևի նոյնպէս կատարիլ։ (Հ. Մկր. Անանեան առ Մելգոնեան, 1757. [տեղի?])։

ՃՃԶ.

Նստաւ սուլթան մուստաֆան ի կիւրակէ և թուր կապեաց ի ԵՇ.բթի մեծաւ հանդիսիւ և նոյնժամայն փոխեաց զբազումս, որպէս զսիլիհտար աղայն, զզզլար աղասին, զխափուտան փա-շայն և զհէքիմզատէն ծովահեղձոյց արար. փոխեաց և հեղձոյց զայլս պալատականս. բայց ար-տաքոյ է խաղաղութիւն մեծ։ (Հ. Մկրտիչ առ Մելգոնեան, 1757. [տեղի?])։

ՃՃԼ.

Ի գլխոյն հրամանէ ամենեքեան սևազգեցեալ գծուծ շրջին, մինչև բժշկաց լատին[աց]ուց եղև զգենուլ զգեստ հարկաւոր հպատակի։... Այսօր տանէրէցն հայր Մկրտչենց տէր յովանէսն եկեալ ի տունօրհնէնք ի 17 յունվարի ըստ նորոյն, ասաց՝ թէ այսօր մեռաւ մխայիմօղլու գէորգ վար-դապետն։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1758 յունվ. 19. ի Կ. Պոլիս)։

ՃՃԸ.

Իմացաք ևս զտալ սուրբ ժողովոյն պաշտպան կրօնիս մերոյ զկարտինալ սփինէլլին։... Վասն որպիսութեան քաղաքիս զայս ծանիք, զի յոյժ թանկութիւն է այժմ ամենայն իրաց, մանաւանդ հացի, որոյ ոչ միայն քառասուն տրամն է մէկ ստակ, այլ և այնքան սեաւ և խառն ի կորեկէ, ի գարւոյ, ի մոխրոյ և յայլոց հատից, մինչ զի ոչ կարէ ուտիլ, և ասի, թէ մինչև ցայսօր չէ եղեալ յստամպոլ այսպիսի սղութիւն. իսկ յանատօլու աւելի է սղութիւնն քան որ յստամպոլ, մինչև լսեմք թէ ի տիարպէքիր զմի շունն մի ոսկի վաճառեն ի յուտել։ Բաց ի սղութենէ տեղւոյս գոյ և եասախ անտանելի ի կողմանէ զգենլեաց ամենայն ռայէից՝ մանաւանդ խալփախից, ուստի գրեթէ ամենեքին այժմ դնեն խալփախս թաթարի ի գլուխս իւրեանց. մերոյն ևս մորթն այնչափ փոքր և նուազ է, մինչև ծաղրական իմն է զոր կրեմք ի գլուխս մեր։ Իսկ ալըշվէրիշ ոչ միայն

1. Օսման Գ.։